

ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

1969 թվականի վերջին օրն է, չորեքշաբթի, դեկտեմբերի 31-ը:

Երեկոյան ժամը 7.30-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը հոգևոր ճեմարանի հանդիսասրահում, Ամանորի ավանդական սեղանների շուրջ բոլորած, հրաժեշտ են տալիս անցնող՝ 1969 թվականին և նոր հույսերով և հույզերով, նոր եռանդով և խղճով, բարի ցանկություններով դիմավորում են նոր տարին՝ 1970 թվականը:

Վեհափառ Հայրապետը օրհնում է բարիքներով ծանրաբեռնված սեղանները, որոնց շուրջ ստեղծվում է Ամանորի ջերմ, հայրենասիրական մթնոլորտ:

Հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը արտագին խոսք է ասում՝ ուղղված Վեհափառ Հայրապետին, շնորհավորելով Նորին Սուրբ Օծության, Մայր Աթոռի միաբանության և հոգևոր ճեմարանի դասախոսների և ուսանողության Նոր տարին:

Այնուհետև գործադրության է դրվում գեղարվեստական մի համեստ հայտագիր՝ նվիրված օրվա խորհրդին և նշանակությանը:

Մեջընդմեջ հանդես է գալիս հոգևոր ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ ճեմարանի եվրոպական երաժշտության դասախոս Խորեն Մեյխանեջյանի:

Բ լսարանի ուսանող Խաչիկ Խաչատրյանը արտասանում է իր հեղինակած «Կոմիտաս» բանաստեղծությունը:

Գ լսարանի ուսանող Ղազարոս սրկ. Կյուրեղյանը, հանուն ուսանողության, շնորհավորում է Վեհափառ Հայրապետի, դասախոսների և ներկաների Նոր տարին և երախտագիտության, որդիական ու նվիրումի ջերմ խոսքեր է ասում:

Հանուն Մայր Աթոռի միաբանության խոսք է առնում ս. Գեղարդի վանքի վանահայր հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, որն իր յուրահատուկ խորհրդածությամբ բնորոշում է ամանորյան խորհուրդը և նրա դերը մարդկային հասարակության կյանքում:

Մի խումբ ուսանողներ, Վարդան սարկավագի գլխավորությամբ, երգում են անգլերեն լեզվով սուրբ Ծննդյան տաղեր:

Բարեշնորհ Հակոբ և Վարդան սարկավագները միասին դաշնամուրի վրա կատարում են Բրամսի հունգարական պարերից:

Ապա սկսվում է կաղանդի ուրախ վիճակահանությունը: Գ դասարանի ուսանող Սամվել Արսենյանը հանդես է գալիս «Հորիզոն» ծիծաղաշարժ ասույթների արտասանությամբ:

Ամանորի առիթով խանդավառ ելույթներ են ունենում և բարեմաղթություններ կատարում Մայր Աթոռի պայծառության, Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության, հայրենյաց բարօրության և աշխարհի խաղաղության համար ներկաներից շատերը:

Ելույթներ են ունենում Վեհափառ Հայրապետը, Վահան եպիսկոպոսը, տեսուչ տ. Շնորհք վարդապետը, պրոֆ. Ա. Առաքելյանը, Ա. Հատիտայնը, Գր. Գյուլլանը և Ս. Անթոնյանը:

Ամանորյան երեկույթը վերջանում է «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայրենիք մեր»-ով: